



USAID
 ամերիկյան ինտերնացիոնալ
 զարգացման կազմակերպություն



unag
 ԱՄՆ-ԵՐԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆ
 ԱՄՆ-ԵՐԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆ

USAID UNITY THROUGH DIVERSITY PROGRAM
 USAID-ին յարակից միասնականության ծրագրի շրջանակներում

ԱՌԱՋԻՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՅՆԵՐ

Տեղեկատվական քարտ



ԻՆՏԵԳՐՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՅԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիան (UNA-Georgia), ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (USAID) կողմից աջակցված «Միասնություն բազմազանության մեջ» ծրագրի շրջանակներում հայտարարում է քաղաքացիական և տնտեսական ինտեգրման դրամաշնորհային ծրագիր:

Դրամաշնորհային ծրագրի նպատակն է Էթնիկ և կրոնական փոքրամասնություններին, ազգային և տեղական մակարդակով, ավելի լավ ներգրավել հասարակական կյանքում, երկրում խթանել հասարակական միասնությունը և հզորացնել փոխշահավետ սոցիալական, քաղաքացիական և տնտեսական կապերը:

ԴՐԱՄԱՇՆՈՐՅԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ԿԱԶՄՎԱԾ Է ԵՐԿՈՒ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԻՑ.

1. Զաղաքացիական ինտեգրման դրամաշնորհներ:
2. Տնտեսական ինտեգրման դրամաշնորհներ:

ԱՌԱՋԻՆ ՈՒՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆՇՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՅԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆԴԱՏԱԿԸ և ԴՐԱՄԱՇՆՈՐՅԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄԱՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

- Էթնիկ և կրոնական փոքրամասնությունների համար բարձրացնել որակյալ կրթության հասանելիությունը նախադպրոցական, միջին, բարձրագույն և մասնագիտական կրթության մակարդակներով: Բարելավել վրացերենի պաշտոնական թե ոչ պաշտոնական ուսուցման հնարավորությունները:
- Խրախուսել Էթնիկ և կրոնական փոքրամասնություններին ներգրավվել քաղաքական գործընթացներում, հանրային խորհրդակցություններում և որոշումներ ընդունելու գործընթացներում, ապահովել նրանց ներկայացվածությունն ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական մակարդակներով:
- Զաղաքացիներին ապահովել հավասար հնարավորություններով, վերացնել խտրականությունը և անհավասար վերաբերմունքը Էթնիկ և կրոնական հողի վրա, պաշտպանել Էթնիկ և կրոնական փոքրամասնությունների քաղաքացիական և քաղաքական իրավունքները՝ հանրային միասնությունը խթանելու նպատակով:
- Խթանել Էթնիկ և կրոնական փոքրամասնությունների խնդիրները հաշվի առնելու գործընթացը ոլորտային հանրային քաղաքականության և օրենսդրության մեջ, այդ թվում՝ առողջապահության, սոցիալական պաշտպանության և պետական ծառայությունների ուղղությամբ:
- Փոքրամասնությունների համար ավելի հասանելի դարձնել առողջապահության, սոցիալական պաշտպանության, հանրային ռեզիստորի ազգային գործակալության, մուլտիցիպալ սոցիալական պաշտպանության և բնակավայրով ապահովելու ծառայությունները:

- Հանրային միասնությունը խթանելու նպատակով, հնչեցնել փոքրամասնությունների ձայնը լայն հանրային քննարկումներում, խրախուսել երկխոսություն՝ ինչպես տեղական, այնպես էլ կենտրոնական մակարդակով:
- Միասնական և հանդուրժող հասարակություն ստեղծելու նպատակով կրթական հաստատություններում, մասնավոր և հանրային կազմակերպություններում աջակցել և խթանել բազմազանությունը և ներգրավվածությունը:
- Աջակցել Վրաստանում առկա բազմազան մշակույթների միջև երկխոսությունը և ընդլայնել մշակութային կապերը՝ առանձնապես կանանց և երիտասարդների ներգրավվածությամբ:
- Կրոնական և էթնիկ փոքրամասնությունների մասին այնպիսի լրատվական դիսկուրս խրախուսել, որը կնպաստի առկա կարծրատիպերի վերացմանը և կնվազեցնի հակաարևմտյան քարոզչության հետևանքով առաջացած վնասը:
- Այլ հարցեր, որոնք համապատասխանում են դրամաշնորհային ծրագրի հիմնական նպատակներին և ուղղություններին:

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ և ԱՅԼ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

- Մեկ կազմակերպությանը/ընկերությանը հասնող դրամաշնորհի քանակի վերին սահմանը \$120,000 է:
- Բացառիկ դեպքերում ֆինանսավորման սահմանը հնարավոր է բարձրացնել:
- Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ֆինանսավորված բոլոր նախագծերը պետք է ավարտվեն առավելագույնը 18 ամսում:
- Նախագծերի թիրախային տարածաշրջաններն են.
 - *Քվեմո Զարթի(Նինոծմինդա, Ծալկա, Գարդաբանի, Դմանիսի, Մառնեյլուլի)*
 - *Սամցխե-Ջավախեթի (Ախալքալաքի, Ախալցխիսե, Նինոծմինդա)*
 - *Կախեթի (Ախմետա, Պանկիսի, Սագարեջո, Ղվարեյի, Լազոդեխի)*
 - *Լեռնային Աջարիա (Շուախևի, Քեդա, Խուլո)*
- Սոցիալական և մշակութային կապերը խորացնելու նպատակով իրականացվող նախագծերը կարող են գործունեություն վարել ոչ միայն թիրախային տարածաշրջաններում, այլև ամբողջ Վրաստանի տարածքում:
- Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ենթադրամաշնորհներ չեն թույլատրվում, սակայն դիմողը կարող է ներկայացնել միասնական դիմում այլ անձանց հետ, ովքեր նույնպես պետք է բավարարեն առաջատար դիմողի համար սահմանված չափանիշները:

Առաջատար դիմողը միաժամանակ կարող է միայն մեկ դիմում ներկայացնել: Այս դիմումի քննարկման ընթացքում նա չի կարող լինել այլ նախագծի համահեղինակ:

ՈՎ ԿԱՐՈՂ Է ՄԱՍՆԱԿՑԵԼ

- Հասարակական կազմակերպությունները և քաղաքացիական-հասարակական հարթակները:

- Համայնքային և հասարակական կամակերպությունները;
- Բարձրագույն ուսումնական հաստատությունները և այլ ուսումնական հաստատությունները;
- Լրատվամիջոցները, հաղորդակցման գործակալությունները:

ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ և ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԸ

- Հայտերը կընդունվեն և կքննարկվեն ստանալուն պես, բաց դռների կարգով (on a rolling basis):
- Հայտ ներկայացնելը տեղի կունենա երկու փուլով, հետևյալ կերպ.
 - Առաջին փուլում պոտենցիալ դիմողները պետք է ներկայացնեն նախագծի հայեցակարգը (առավելագույնը 5 էջ՝ առանց հավելվածների),
 - ՄԱԿ-ի ասոցիացիայից պահանջի դեպքում՝ ամբողջական հայտ (առավելագույնը 15 էջ՝ առանց հավելվածների),
 - Լրացնելու հայտերը երկու փուլերի համար, կարող էք գտնել Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի վեբ-կայքում. Սկանավորել QR Code,
 - ՄԱԿ-ի ասոցիացիան դրամաշնորհներն ընտրող թիմի/հանձնաժողովի հետ սիստեմատիկորեն կքննարկի ներկայացված նախագծային հայտերը:

ԵԹԵ ԴԻՍԵԼՈՒ ԸՆԹԱՑՔՈՒՄ, ԴԻՍՈՐԴՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ

- Դոտենցիալ դիմորդների հնարավորությունները հզորացնելու նպատակով, ՄԱԿ-ի ասոցիացիան ապահովում է դրամաշնորհային նախագծեր գրելու, ֆինանսային մենեջմենտի, ներքին վերահսկողության, մոնիտորինգի և գնահատման սեմինարներ և գործնական հանդիպումներ՝ տարին առնվազն երկու անգամ: Նշված միջոցառման ամսաթվերը և օրակարգը կիրապարակվի Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի վեբ-կայքում (www.una.ge) և հասանելի կլինի բոլոր հետաքրքրված կազմակերպությունների համար:

ՀԱՅՏԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ.

- Դրամաշնորհային հայտը պետք է ուղարկել էլեկտրոնային եղանակով՝ հետևյալ հասցեին. una@una.ge, իսկ subject line-ում պետք է գրել „Georgia Integration Grants Facility“:

